

<https://doi.org/10.46991/hc.2025.22.2.068>

The Attitude of the Ittihadists Toward Language and the Education System in the Context of the Turkification of the Ottoman Empire

Regina Galustyan

<https://orcid.org/0000-0002-6486-5797>

Armenian Genocide Museum-Institute, Institute of Oriental Studies, NAS RA, Researcher

galustyanra@gmail.com

Keywords: The Committee of Union and Progress, homogenization, nation-state, language reform, unified education system, scouting, translation of the Quran.

The ideology of the Committee of Union and Progress, which exercised political power in the Ottoman Empire from 1908 to 1918, was Turkism. After the 1913 coup d'état, the party merged with the state apparatus and directed its political actions toward transforming the multiethnic and multireligious empire into a homogeneous entity. The Ittihadists' debates on language reform, alphabet change, and the translation of the Quran, followed by concrete steps to implement these ideas, had a profound impact on the formation of a Turkish national identity. After 1908, newly adopted laws on associations, language, and education gradually began to push non-Turkish citizens to the margins of society. Examining the attitude of the ruling party toward language and the educational system during this pre-genocidal period reveals the role (or the absence thereof) assigned to the empire's non-Turkish population. This perspective allows these phenomena to be seen as part of a systemic process and helps clarify the logic behind subsequent developments in the empire.

**Իթթիհաթականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան
կայսրությունը թրքացնելու համատեքստում**

Ռեգինա Գալուստյան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,
գիտաշխատող

*Հիմնաբաներ՝ «Միություն և առաջադիմություն», միատարրացում,
ազգային պետություն, լեզվի բարեփոխում,
միասնական կրթական համակարգ, սկստիվիզմ, Ղուրանի թարգմանություն:*

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 68-80.



Received: 15.09.2025

Revised: 13.10.2025

Accepted: 24.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

1908-1918 թթ. Օսմանյան կայսրությունում քաղաքական իշխանություն իրականացնող «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսությունը թուրքիզմն էր: 1913 թ. պետական հեղաշրջումից հետո կուսակցությունը, սերտաճելով պետական ապարատին, իր քաղաքական քայլերն ուղղեց բազմազգ, բազմակրոն կայսրությունը միատարր դարձնելուն: Իթթիհաթականների քննարկումները լեզվի բարեփոխումների, այբուբենի փոփոխության ու Ղուրանի թարգմանության վերաբերյալ, այնուհետև դրանց ուղղված գործնական քայլերը հսկայական ազդեցություն ունեցան թուրքական ազգային ինքնության ձևավորման վրա: 1908 թ. հետո ընդունված միավորումների, լեզվի ու կրթության մասին օրենքները աստիճանաբար սկսեցին ոչ թուրք քաղաքացիներին մղել հասարակության լուսանցք: Լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ իշխող կուսակցության վերաբերմունքի ուսումնասիրությունը նախացեղասպանական այս փուլում բացահայտում է այն դերը (կամ դրա բացակայությունը), որը վերապահվում էր կայսրության ոչ թուրք բնակչությանը՝ հնարավորություն տալով երևույթները դիտարկել որպես համակարգային գործընթաց ու ընկալել կայսրությունում տեղի ունեցած հետագա զարգացումների տրամաբանությունը:

Отношение иттихадистов к языку и системе образования в контексте туркизации Османской империи

Регина Галустян

Музей-институт геноцида армян, Институт востоковедения, НАН РА, научный сотрудник

Ключевые слова: Комитет «Единение и прогресс», гомогенизация, национальное государство, языковая реформа, единая система образования, скаутское движение, перевод Корана.

Идеологией Комитета «Единение и прогресс», осуществлявшего политическую власть в Османской империи в 1908–1918 годах, был туркизм. После государственного переворота 1913 года партия, слившись с государственным аппаратом, направила свои усилия на гомогенизацию многонациональной и многорелигиозной империи. Дискуссии иттихадистов о языковой реформе, изменении алфавита и переводе Корана, а также последующие практические шаги по реализации этих идей оказали глубокое влияние на формирование турецкой национальной идентичности. После 1908 года принятые законы об ассоциациях, языке и образовании постепенно начали вытеснять нетурецких граждан на периферию общества. Изучение отношения правящей партии к языку и системе образования на этом, предшествовавшем геноциду этапе, позволяет выявить роль (или её отсутствие), которая отводилась нетурецкому населению империи. Такой подход даёт возможность рассматривать эти явления как часть системного процесса и помогает прояснить логику последующих событий в империи.

* * *

Իթթիհաթականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան կայսրությունը թրքացնելու համատեքստում

Ներածություն: 1889 թ. Կ. Պոլսում հիմնված «Միություն և առաջադիմություն» (թուրք.՝ *Ittihat ve Terakki Cemiyeti*, այսուհետ՝ իթթիհաթականներ) կոմիտեն Օսմանյան կայսրությունում իշխանությունը դե յուրե իր ձեռքում է պահել 1908-1918 թթ.՝ մասնակիորեն շարունակելով իր ազդեցությունը նաև հանրապետական շրջանում: Այս կոմիտեից կազմված կառավարությունն է իրականացրել կայսրության հայ, հույն ու ասորի համայնքների ցեղասպանությունը: Սրանով է պայմանավորված կոմիտեի գաղափարախոսության, քաղաքական ծրագրերի առանձին բաղադրիչների ու դրանց գործադրման մեխանիզմների ուսումնասիրության արդիականությունը:

Կայսրության համար շրջադարձային դարձած 1913 թ. պետական հեղաշրջումից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ամբողջությամբ զավթեց իշխանությունը: Պետական ապարատի ու կուսակցության այս սերտաճումը նախապայման հանդիսացավ ավելի վաղ ընդունված որոշումների համակարգման ու իրագործման համար: Իթթիհաթականների հաստատած ռեժիմը Կիզերին բնութագրում է որպես պրոտոֆաշիստական, որը, ժամանակագրորեն նախորդելով եվրոպական ֆաշիզմին, Թուրքիայում շարունակվել է նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո [Kieser, 2018, 354]: Քաղաքական լիազորություններով օժտված այս կուսակցությունը 1908 թվականից ի վեր ներքաղաքական բոլոր քայլերն ուղղել է բազմազգ ու բազմակրոն կայսրությունը թուրքական ազգային պետության վերածելու ռազմավարական գերնպատակին [Adalian, 1997, 50]:

Թեև սահմանադրությունը հիմնված էր բոլոր օսմանցիների հավասարության սկզբունքի վրա, կառավարությունը բացահայտ խոսում էր թուրքի՝ որպես Օսմանյան կայսրության գերակա ռասայի ու ամեն ինչ թրքացնելու իր մտադրության մասին [Hagopian A. D., Armenia, 03.1912, 235]: Իթթիհաթական սոցիալական ինժեներիան ենթադրում էր երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային ու ժողովրդագրական թրքացում [Ungör, 2011, 50]: Ժողովրդագրական միատարրացման ծրագրում Օսմանյան կայսրության հայ ժողովրդի ոչնչացումը առանցքային նշանակություն ուներ:

Հայոց ցեղասպանությունը դիտարկելով որպես «ոչնչացում-կառուցում» բանաձևի կիրառում (այսինքն՝ հայ ժողովրդի ոչնչացում ու թուրքական ազգային պետության կառուցում)՝ սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի վերաբերմունքը լեզվի և կրթական համակարգի նկատմամբ՝ սկսած 1908 թվականից: Խնդրի վերահանումը հնարավորություն կտա գնահատելու այն դերը (կամ դրա բացակայությունը), որը կոմիտեն վերապահում էր կայսրության ոչ թուրք, հատկապես ոչ մուսուլման քաղաքացիներին նախացեղասպանական այս փուլում: Հետազոտության համար կհամադրվեն ժամանակի մամուլը, իթթիհաթական գաղափարախոսների աշխատությունները, ինչպես նաև գիտական, տեսական համապատասխան գրականություն:

Կրթական համակարգի բարեփոխում, համընդհանուր կրթություն: XX դարասկզբին դպրոցն ու առհասարակ կրթությունը որպես ապագա քաղաքացու բնավորության գնդան ծառայեցնելն ակտիվորեն քննարկվում էր եվրոպական երկրներում [Conversi, 2007, 387]: Այս առումով իթթիհաթականները բացառություն չէին: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի

ազգայնական ծրագրերը թիրախավորում էին կայսրության ինչպես թուրք (մուսուլման), այնպես էլ՝ ոչ թուրք երեխաներին: Ինչպես նշում է ժամանակակից թուրքական ազգայնականության հայր ու կոմիտեի գաղափարախոս Զիյա Գյոքալփը, թուրք երիտասարդության շրջանում արդեն իսկ կար ազգայնական միտում, սակայն «այն, ինչ մենք ենք ուզում, այդ միտումը վեհ ու սուրբ հավատքի վերածելն է» [Gökalp, 1959, 315]:

Իթթիհաթականների՝ կրթությունը ու դաստիարակությունը կարևորելու միտումը գալիս էր բնական գիտությունների հանդեպ հավատից, որը նրանց աշխարհայացքում նշանակալի տեղ էր զբաղեցնում [Hanioğlu, 1995, 207]: Նրանք կարծում էին, որ հասարակական խնդիրների լուծումը կարելի է գտնել միայն բնական գիտությունների մեթոդների կիրառությամբ: Գյոքալփը մեծապես ազդվել էր ֆրանսիացի սոցիոլոգ Էմիլ Դյուրկհեյմի (1858-1917 թթ.) ուսմունքից [Gökalp, 1959, 22]: Վերջինս, կարևորելով գիտությունն առհասարակ, կարծում էր, որ դաստիարակության նպատակը երեխային հասարակական էակ դարձնելն է, այսինքն՝ նրա մեջ անհատական այն հատկանիշները զարգացնելը, որոնք անհրաժեշտ են ն՝ հասարակությանը, ն՝ այն միջավայրին, որին երեխան պատկանում է [Осипова, 1977, 197]: Երեխային «հում նյութ» դիտարկելու այս դրույթը տեսական հիմք ծառայեց արդեն ցեղասպանության ընթացքում հայ երեխաներին թուրքական հաստատություններ տեղափոխելու ու նրանց ձուլելու ցեղասպանական գործողության համար [Գզոյան, Գալուստյան, Խաչատրյան, Միրզոյան, 2022, 69]:

1908 թ. հետո կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց կրթական համակարգին: Իթթիհաթականները կրթական համակարգով էին պայմանավորում եվրոպական երկրների տնտեսապես, մշակութապես զարգացած լինելն ու Օսմանյան կայսրության հետամնացությունը:

Օսմանյան կայսրությունում կրթության խնդիրն առաջին անգամ կանոնակարգվել է 1869 թ. ընդունված «Ժողովրդական կրթության մասին» օրենքով, ըստ որի՝ տարրական կրթությունը պարտադիր էր հռչակվում բոլոր քաղաքացիների համար (այդ թվում՝ կանանց): Օրենքով դպրոցները պետական վերահսկողության տակ էին դրվում, դասագրքերը՝ ենթարկվում գրաքննության [Желтяков, 1972, 38-39]: Օսմանյան միլլեթային համակարգի պայմաններում կրթության մասով այս օրենքը երբեք չգործադրվեց [Gök, 2007, 247]:

XVIII դարի վերջին-XIX դարի սկզբին Օսմանյան կայսրության մուսուլման համայնքում տարրական կրթությունը շարունակում էին ապահովել մզկիթներին կից գործող մեքթեբները, բարձրագույնը՝ մեդրեսները: Մեդրեսեն այնպիսի հաստատուն կառույց էր, որ վերացվեց միայն հանրապետական կարգերի հռչակումից հետո: 1839 թ. գործում էին նաև ավագ դպրոցներ՝ ոյուշթիներ, որոնց տված կրթությունը իրականում շատ չէր տարբերվում մեդրեսներից: Կրթական այս հաստատությունները չէին ապահովում հիմնարար աշխարհիկ կրթություն [Karagöz, 2020, 161]: Համակարգի թերզարգացած լինելու մասին է վկայում, օրինակ, ժամանակի մամուլի շրջանառությունը: Այն դեպքում, երբ թերթերի գինը չորս ցենտից նվազել էր մեկի, 1901 թ. շրջանառվում էր թերթերի այն նույն քանակը, ինչ 1873 թ. [Emin, 1914, 78-79]:

Կրթական համակարգը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ուշադրության կենտրոնում էր: 1911-1912 թթ. աշխատանքային այցով Կ. Պոլսում գտնվող ռուս լրագրող Արիադնա Տիրկովան նշում է, որ իթթիհաթական մտավորականները միահամուռ նույն կոչն էին անում. «Մեր հայրենիքը մեռնում է անկիրթ լինելուց: Յուրաքանչյուր հայրենասեր պարտավոր է սովորել և մյուսներին սովորեցնել» [Тыркова, 1916, 136]: Այս մտայնությամբ իթթիհաթական մի շարք

Իթթիհաթականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան կայսրությունը թրքացնելու համատեքստում

բարձրաստիճան պաշտոնյաներ ու գաղափարախոսներ, որոնց թվում՝ Ահմեդ Ռիզան, Աբդուլլա Ջևդեթը, Մեհմեդ Ջավիդը, Հալիդե Էդիպը, Ջիյա Գյոքալփը, աշխատում էին նաև կրթության ոլորտում [120, 164; Սաֆարյան, 2012, 144]:

Կրթական համակարգը բարեփոխելու քարոզչություն էր տարվում նույնիսկ Բալկանյան պատերազմների (1912-1913 թթ.) ընթացքում: «Իկդամ» (թուրք.՝ İktam, ջանք) թերթը գտել է պատերազմում թուրքերի պարտության իր պատճառը: Թերթի հոդվածներից մեկի հեղինակը պատմում է, թե ինչպես է Բալկանյան պատերազմի սկզբում Կրքքիլիսեում (ներկայիս՝ Կրքլարեղի) ներկա գտնվել մի բուլղար ռազմագերու հարցաքննությանը: 21-22 տարեկան այդ գյուղացին գրել-կարդալ գիտեր. «Մենք՝ գրեթե բոլորս, գիտենք՝ տարրական կրթությունը պարտադիր է»: Հեղինակը եզրակացնում է, որ իր երիտասարդներին կրթություն տվող նման ազգը բնական է, որ ուժեղ բանակ պետք է ունենա: «Ինչպե՞ս կարող ենք բարձրանալ» հարցին հոդվածագիրը պատասխանում է, որ թուրքերը դա կարող են անել միայն կրթությամբ՝ մտավոր, սոցիալական ու ֆիզիկական, ուղղություններ, որոնք շեշտադրվեցին նաև իթթիհաթականների կողմից [The Orient, 09.04.1913, 2]:

1908 թ. սահմանադրության վերահռչակումից հետո կառավարությունը սկսեց անդել, որ անհրաժեշտ է ստեղծել խառը դպրոցներ, որոնք կապահովեին քրիստոնյաների ու մուսուլմանների համատեղ կրթությունը [Желтяков, Петросян, 1965, 105]: Դրանից բացի՝ բոլոր մասնավոր (ազգային փոքրամասնություններին ու միսիոներներին պատկանող) դպրոցներում ներմուծվեցին պարտադիր առարկաներ՝ օսմաներեն, օսմանյան աշխարհագրություն ու օսմանյան պատմություն [Еремеев, 1971, 204]:

1909 թ. զինապարտության օրենքի ընդունումից հետո պետական դպրոցների ուսուցիչներն ազատվեցին զինծառայությունից, իսկ մասնավոր դպրոցների ուսուցիչները՝ ոչ: Քրիստոնյա համայնքները դպրոցներ պահելու համար պետությանը հավելյալ հարկ վճարելով հանդերձ՝ իրենք էին հոգում իրենց դպրոցների ծախսերը: Սակայն նույնիսկ այս պարագայում այդ դպրոցների շրջանավարտները խտրականության էին ենթարկվում աշխատանքի տեղավորվելիս [Hagopian A. D., Armenia, 03.1912, 235]:

Սա կայսրությունը թրքացնելու համընդհանուր քաղաքականություն էր և ուղղված չէր միայն քրիստոնյա բնակչության դեմ: Կառավարությունն արգելում էր մուսուլման ալբանացիներին գործածել իրենց այբուբենը [նույն տեղում]: Կատաղի ընդդիմության է հանդիպում նաև ալբանացիների՝ լատիներեն այբուբենի անցնելու առաջարկը, որը կոմիտեի «Թանին» (թուրք.՝ Tanin – արձագանք) պաշտոնաթերթը որակում էր որպես դավաճանություն, հեռացում «թրքությունից ու մուսուլմանությունից» [Tongul, 2010, 108]: 1912 թ. օսմանյան խորհրդարանի ալբանացի պատգամավոր Սյուրեյ բեյը (Վլորա) քննադատեց իթթիհաթականների կրթական քաղաքականությունը: Նա նշում էր, որ ալբանական դպրոցներն ուղղակի փակվել են, իսկ Բերաթի իդադիեն (լիցեյ), որտեղ կրթություն էին ստանում ապագա պետական պաշտոնյաները, չուներ ո՛չ դասագրքեր, ո՛չ ուսուցիչներ [Тыркова, 1916, 85-86]:

1913 թ. կրթության մասին Ժամանակավոր օրենքով նախկին տարրական դպրոցների փոխարեն հիմնվեցին ընդհանուր նախակրթարաններ՝ վեցամյա կրթական ծրագրով: Բոլոր

կրթական հաստատությունները վերջնականապես դրվեցին պետական վերահսկողության ներքո [Ungör, 2011, 173]: Սակայն «պետական վերահսկողությունը» վերաբերում էր դասավանդվող առարկաների ու ուսուցիչների ընտրությանը, բայց ոչ դպրոցների ֆինանսավորմանը: Օրենքով ֆինանսական հատկացումներ պետք է տրվեին նաև քրիստոնյաների ազգային դպրոցներին, սակայն այնքան արհեստական դժվարություններ էին հարուցվում, որ մասնավոր դպրոցները «կամավոր» հրաժարվում էին այդ հատկացումներից [Желтяков, Петросян, 1965, 109]:

Ազգային փոքրամասնությունների կրթական հաստատությունների գործունեությունը սահմանափակելուց բացի՝ իթթիհաթականները քարոզ սկսեցին նաև միսիոներական դպրոցների դեմ: 1890 թ. այդ կրթական հաստատություններում սովորող մուսուլմանների թիվը կազմում էր մոտ 1, 1900 թ.՝ 15, իսկ 1911 թ.՝ 56 տոկոս: Ըստ «Հաք» (թուրք.՝ Hak – իրավունք) թերթի՝ 1912 թ. մուսուլման աշակերտների թիվը կազմում էր արդեն 60 տոկոս: Հոդվածն ավարտվում է այն եզրահանգմամբ, որ միսիոներական դպրոցների շրջանավարտները ո՛չ քրիստոնյա են, ո՛չ մուսուլման, ո՛չ օսմանցի, քանի որ չունեն ազգայնական որևէ զգացում [The Orient, 17.07.1912, 2]: Իթթիհաթական գաղափարախոսներից Աղաօղլու Ահմեդը նույնիսկ գրում է, որ իսլամի ու օսմաներենի դասերը միսիոներական դպրոցները միտումնավոր դուրս են թողնում՝ իրենց աշակերտների կրոնական ու ազգային զգացումները ոչնչացնելու նպատակով: Հեղինակի պնդմամբ պետական դպրոցների քանակն ավելացնելու դեպքում մուսուլմանները կդադարեն հաճախել օտար դպրոցներ [The Orient, 24.09.1913, 2]: Գյոքալփը ևս կարծում է, որ խնդիրը մեկ միասնական կրթական համակարգի բացակայությունն է, որն իրականում պետք է հենված լինի ազգային մշակույթի վրա [Gökalp, 1959, 240]՝ բնականաբար, «ազգայինի» տակ ենթադրելով թուրքականը:

Կառավարության ջանքերով 1912-1913 թթ. ակադեմիական տարում կայսրությունում գործում էր 12,814 նախակրթարան՝ 596,460 ուսանողով ու 19,212 ուսուցչով, 153 ավագ դպրոց՝ 27,461 ուսանողով ու 1518 ուսուցչով, 17 մանկավարժական քոլեջ՝ 1518 ուսանողով ու 141 ուսուցչով, և 17 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 6677 ուսանողով ու 368 ուսուցչով [Yalman, 1930, 82]: Այս թվերը, որոնք չեն ներառում մասնավոր ու օտար դպրոցները, շատ ցածր էին կայսրության մուսուլման բնակչության ընդհանուր թվաքանակի համեմատ, բայց նույնիսկ այս ցուցանիշներն իթթիհաթականների վարած քաղաքականության արդյունքն էին:

Երկրի մշակութային ու հասարակական ոլորտը միատարր դարձնելուն էր ուղղված նաև 1909 թ. օսմանյան խորհրդարանի ընդունած «Միությունների մասին» օրենքը (թուրք.՝ Cemiyetler Kanunu) [Bayır, 2013, 52]: Օրենքն արգելում էր Օսմանյան կայսրությունում «էթնիկ կամ ռասայական» հիմքով միությունների, մշակութային կազմակերպությունների հիմնումը: Սա առաջին խոշոր քայլն էր, որը ցույց տվեց կառավարության՝ օսմանիզմի հռետորաբանության ու թուրքիզմի քաղաքականության հակասականությունը: Խորհրդարանում այս օրենքը մեծ քննարկումների տեղիք տվեց, որի ընթացքում ոչ թուրք պատգամավորները այն «խռովության սերմ» հայտարարեցին, որն աղերս չունեի օսմանիզմի հետ և ծառայելու էր կայսրության միայն թուրք բնակչության շահերին [նույն տեղում]:

1909 թ. հուլիսի 7-ին խորհրդարանի քննարկման ընթացքում Սսից պատգամավոր Համբարձում Բոյաջյանը նշում էր, որ պետությունն իր հպատակներին պետք է թույլ տա ազատ արտահայտվել՝ նրանց կարիքները ոռ խնդիրները հասկանալու նպատակով: Չհամաձայնվելով այն գաղափարին, որ էթնիկ հիմքերով կազմակերպությունների հիմնումը տանում է

Իթթիհաթականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան կայսրությունը թրքացնելու համատեքստում

ապակենտրոնացման ու անջատողականության՝ նա շեշտում էր. «Կառավարության արդար գործելու պարագայում, եթե նույնիսկ խնդրենք հայերին, հույներին ու բուլղարներին գաղտնի կազմակերպություններ հիմնել, նրանք չեն անի: Եթե Ամերիկա գնաք, այնտեղ հազարավոր ազգություններ կան, բայց ոչ մեկը չի փորձում միայն իր համար գործել, քանի որ սահմանափակումներ չկան» [նույն տեղում]: Օրենքի ընդունումից անմիջապես հետո Կ. Պոլսում փակվել են բոլոր քրդական կազմակերպությունները և դպրոցները: Դրան հակառակ կառավարությունն ուղղակի ֆինանսավորում էր իթթիհաթական կազմակերպությունների, մշակութային ակումբների հիմնումը, ինչպես, օրինակ, «Թուրքական օջախներն» էին (թուրք.՝ Türk Ocakları) [նույն տեղում, 53]:

Կոմիտեի մասնաճյուղերն ու ակումբները ևս ներառվեցին սոցիալ-մշակութային ու կրթական գործընթացներում: Առաջին դպրոցը, որը բացվեց հենց կոմիտեի ֆինանսավորմամբ, Մալոնիկի բարձրագույն դպրոցն էր, որը սկսեց գործել՝ 1911 թվականից սկսած: Գյոքալփի պնդմամբ դասացուցակի մեջ ընդգրկվել էին նոր առարկաներ՝ սոցիոլոգիա ու փիլիսոփայություն: Կոմիտեի հատուկ ֆինանսավորմամբ դպրոցներ սկսեցին բացվել իթթիհաթական ակումբներին կից, երբեմն էլ՝ հենց ակումբում: Կոմիտեի դպրոցների ու երեկոյան դասընթացներ առաջարկող ակումբների թիվը 1910 թ. հասավ 600-ի [Tozoglu, 2022, 620, 629]:

Իթթիհաթական գաղափարախոսները հատուկ ուշադրություն էին դարձնում նաև ֆիզիկական կրթությանը: Կազմակերպվում էին առողջ մարմնի, հիգիենայի վերաբերյալ դասախոսություններ: Մարմնի ու ֆիզիկական կրթության շեշտադրման դրսևորում էր գերմանական սկաուտիզմի (գերմ.՝ Pfadfinder) մոդելով թուրքական առաջին սկաուտական ակումբների հիմնումը՝ «կատարյալ զինվորի» կերտման մղումով [Nezir-Akmeşe, 2005, 167]: Կառավարությունը թուրք տղաներին տանում էր սկաուտական ակումբներ՝ երբեմն բռնի կերպով հեռացնելով ընտանիքներից [Maksudyan, 2016, 160]: Ունենալով գերմանական հիմք, սկաուտիզմը մաքուր թուրքական ձև ստացավ. խմբերին տրվում էին հին թուրանական անվանումներ, աղոթում էին ոչ թե ալլահին, այլ թանրըին [Զարեանդ, 1926, 115]: 1914 թ. ապրիլին ստեղծվեց «Օսմանյան ուժի ընկերությունը»: Այն պարտադիր դարձրեց պետական ու կրոնական դպրոցների աշակերտների անդամակցությունը [Maksudyan, 2016, 159]: Կազմակերպությունը հետագայում ընդլայնվեց և վերափոխվեց «Երիտասարդ միությունների» (թուրք.՝ Genç Dernekleri)՝ գերմանացի գնդապետ ֆոն Հոֆի հրամանատարությամբ: Այն իր տեղը զբաղեցրեց զինվորական հիերարխիայում՝ ռազմական նախարար Իսմայիլ Էնվերի հրամանատարությամբ: Տեսականորեն կազմակերպությունը թիրախավորում էր օսմանյան ողջ երիտասարդությանը, սակայն փաստացիորեն կարող էին անդամակցել միայն թուրքերը, քանի որ նպատակը «թուրքերի առողջությունը բարելավելն էր»: 1918 թ. Ֆոն Հոֆը հայտարարում էր, որ կազմակերպությունը կրթել է 200,000 պատանիների՝ 3,500 մարզիչների հսկողության ներքո [160-161]:

Թեև 1914 թ. թուրքական մամուլը շարունակում էր խոսել պետական դպրոցների որակապես թույլ լինելու մասին, իթթիհաթականների ձեռքբերումները շոշափելի էին [The Orient, 22.04.1914, 153]: Ուսումնական հաստատությունների, ակումբների ու սկաուտական կազմակերպությունների

շնորհիվ իթթիհաթականները սփռում էին իրենց ազգայնական (նաև կուսակցական) քարոզչությունը՝ միաժամանակ ձևավորելով հավատարիմ հետևորդներ: Գյոքալփը նույնիսկ այնքան հեռուն գնաց, որ 1916 թ. մեղրեսները Կրթության նախարարության իրավասության ներքո դնելու մասին հուշագիր ներկայացրեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության քննարկմանը [Սաֆարյան, 2012, 162]:

Մեկ միասնական կրթական համակարգ ստեղծվեց միայն հանրապետության առաջին տասնամյակում, որի հիմքերը, սակայն, դրվել էին 1908-1918 թթ. «Միություն և առաջադիմության» կողմից: Միաժամանակ երկրի թրքացման համատեքստում, օրենսդրությամբ ճնշվեց օսմանյան հայ համայնքի (ինչպես նաև այլ փոքրամասնությունների) մշակութային կյանքը: Արդեն 1915 թվականից սկսած՝ նպատակաուղղված քաղաքականությամբ վերացվեցին ազգային, կրոնական հաստատությունները, դպրոցներն ու հասարակական միությունները՝ կազմելով Հայոց ցեղասպանության կարևոր բաղադրիչներից մեկն ու հսկայական հարված հասցնելով հայ ինքնությանը:

Լեզվի ու այբուբենի բարեփոխման քննարկումները: Թուրքական ազգայնականության կերտումը, ինչպես յուրաքանչյուր ազգայնականության պարագայում, սկսեց հենց լեզվի բարեփոխումից [Kedourie, 1961, 59-69], որին լծվեց 1865 թ. Կոստանդնուպոլսում հիմնված ընդդիմադիր Նոր օսմանների խմբակը [Фадеева, 1985, 117]: Նոր օսմաններն առաջարկում էին գրական համարվող օսմաներենի փոխարեն կիրառել խոսակցական թուրքերենը, նաև մաքրել լեզուն արաբերեն, պարսկերեն փոխառություններից և այն ավելի հասարակ դարձնել: Նրանց տպագրած թերթերը, գրական ստեղծագործությունները հսկայական նշանակություն ունեցան այս գաղափարը քարոզելու գործում [Emin, 1914, 34]: Կարևոր էր Նոր օսմանների լեզվի քաղաքական նշանակության շեշտադրումը: Նոր օսմաններից Նամըք Քեմալի կարծիքով լեզուն համախմբելու ու ձուլելու հզոր միջոց է, իսկ Ալի Սուլալին առաջնորդվում էր «թուրքերեն խոսողը թուրք է» սկզբունքով [Сафратян, 1985, 99]:

1868 թ. նորօսմանական «Մուհբիր» (օսմ.՝ Muhbir – լրաբեր) թերթի հունվարի 18-ի համարում տպագրվեց անգլիացի արևելագետ Չ. Ուիլլիսի հոդվածը՝ Ալի Սուլալիի նախաբանով: Հեղինակը պնդում էր, որ Օսմանյան կայսրությունում ազգային խնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է թուրքերենը դարձնել «օսմանցիների» համար համապարտադիր՝ որպես օրինակ բերելով անգլիացիներին, որոնք անգլերենը պարտադիր դարձրին բրիտների, շոտլանդացիների ու իռլանդացիների համար: Հոդվածի նախաբանում Սուլալին, կողմ արտահայտվելով գաղափարին, առաջարկում էր կայսրության բոլոր դպրոցներում ուսուցումն օսմաներեն դարձնել [Желтяков, 1972, 110]:

Նոր օսմանների գաղափարները մեծապես ազդեցին սահմանադրական շարժման ու 1876 թ. հռչակված սահմանադրության բովանդակության վրա, որով պետական լեզու սահմանվեց թուրքերենը [Թոփչեան, 1909, 137-160]: Նոր օսմանները գնահատում էին լեզվի քաղաքական ներուժը՝ որպես հասարակության վրա ազդելու, հասարակական կարծիք ձևավորելու ու կայսրության ազգային փոքրամասնություններին ձուլելու միջոց: Իթթիհաթականները, փոխառելով այս գաղափարները, ընդլայնեցին դրանց շրջանակը և իշխանության գալով զուգակցեցին քարոզչությունը գործնական քայլերի հետ:

Իթթիհաթականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան կայսրությունը թրքացնելու համատեքստում

Գյոքալփը ազգի վերաբերյալ իր տեսական քննարկումներում լեզուն դրեց սոցիալական կյանքի, քաղաքակրթության ու մշակույթի հիմքում [Gökalp, 1959, 82]: Քրդական ծագում ունեցող Գյոքալփն ազգի սահմանման մեջ մեծ տեղ էր հատկացնում կրթությանն ու մշակույթին: Ըստ Գյոքալփի՝ լեզուն գաղափարների ու գեղարվեստների կրողն է, սովորույթների ու ավանդույթների հաղորդիչը, հետևաբար նրանք, ովքեր խոսում են միևնույն լեզվով, կիսում են նույն ձգտումները, մտածելակերպը [80]: Իթթիհաթական Ահմեդ Հիքմեթի խոսքերով օսմանցիությունը ստվերել է թուրքերին, և թուրքը մոռացել է իր ծագումը: Թուրքից նույնիսկ վերցրել են նրա լեզուն՝ «առողջ» թուրքերենի փոխարեն նրան տալով օտար անհասկանալի մի լեզու: Ըստ Հիքմեթի՝ անհրաժեշտ է, որ մտավորականները բարձրացնեն թուրքի ինքնագիտակցությունը. «նրան կրկին մարդ դարձնեն» [Тыркова, 1916, 175]:

Պետության պաշտոնական լեզուն թուրքերենն էր, ինչն ամրագրված էր սահմանադրությամբ: Սակայն օրենքների մի ամբողջ շարքով ամրապնդվում էր թուրքերենի մենաշնորհային դիրքը: Խորհրդարանում թե՛ քննարկումների տեղիք տվեց օրենսդրությունը միայն թուրքերենով տպագրելու որոշումն այն դեպքում, երբ ոչ թուրք պատգամավորները պնդում էին հրապարակել օրենքները Օսմանյան կայսրությունում գործածվող բոլոր լեզուներով: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գրիգոր Զոհրապն իր ելույթում անդրադառնում է օսմանիզմի քարոզած «տարրերի միությանը», պնդելով, որ յուրաքանչյուր համայնքի լեզվի գործածությունը չի խոչընդոտում այդ միությանը և չի նսեմացնում պետական լեզվի կարևորությունը [Bayır, 2013, 56]: Վարդգեսի ելույթն ավելի կոշտ էր. «Եվ ի՞նչ է նշանակում միություն: Դուք ցանկանում եք, որ մենք թո՛ւրք լինենք: Մենք օսմանցի ենք, բայց ոչ թուրք» [57]:

Քարոզչության հետ մեկտեղ իթթիհաթականների 1913 թ. քաղաքական ծրագրի կրթական մասը նախատեսում էր բոլոր մասնավոր տարրական ու միջնակարգ դպրոցներում թուրքերենի ուսուցումը դարձնել պարտադիր, թեև ընդհանուր ուսուցումը կարող էր անցկացվել մայրենի լեզուներով: Օրենքով թուրքերենը պարտադիր դարձավ գրագրության ու պաշտոնական հաշվետարարության համար՝ չենթարկվողների համար սահմանելով տուգանք, իսկ զանցանքի կրկնության դեպքում՝ առևտրով զբաղվելու արգելք [նույն տեղում]: Մա, իհարկե, լրացուցիչ հարված հասցրեց դեռևս գործող հայ ու հույն ձեռնարկատերերին:

Թուրքերենը դպրոցներում համապարտադիր դարձնելու պետական քաղաքականությունը առավել սրեց լեզվի բարեփոխման անհրաժեշտությունը: 1915 թ. օգոստոսին «Հիլալ» (օսմ.՝ Hilal – մահիկ) թերթը գրում է, որ այբուբենի բարդությամբ պայմանավորված՝ քննարկվում է մեկ տառ-մեկ գրության ձև տարբերակը [The Orient, 18.08.1915, 214]: Այս գաղափարը նույնպես մաքուր իթթիհաթական չէր: Դեռևս Նոր օսմաններից Իբրահիմ Շինասին էր առաջարկել գրագրության մեջ արաբականի փոխարեն օգտագործել լատինական այբուբենը, սակայն Նոր օսմանները մերժել էին այդ գաղափարը ժողովրդի կապն անցյալի հետ չխզելու ու կրոնի հեղինակությունը չսասանելու հիմնավորմամբ [Epemeev, 1971, 196]:

Լեզվի ու այբուբենի բարեփոխման հետ մեկտեղ իթթիհաթական մտավորականների շրջանում լայնորեն քննարկվում էին կրոնն «ազգայնացնելու» հարցերը: 1913 թ. ուստիկանությունը

ձերբակալում է Կաստամունու լիցեյի երեք ուսուցչի, որոնցից մեկին՝ բնագիտության դասի ընթացքում Դարվինի էվոլյուցիոն տեսությունը բացատրելու համար: Կոմիտեի հիմնադիրներից մեկը՝ բժիշկ Աբդուլլա Ջևդեթը, մեկնաբանում է. «Երկիրը, որտեղ Դարվինի տեսությունն ուսուցանելը դեռևս համարվում է սրբապղծություն, միջին դարերից դուրս չի եկել: Եվ այդ դարաշրջանում գտնվող երկիրը XX դարում տեղ ունենալու իրավունք չունի: Սա պետք է հասկանա յուրաքանչյուր գլուխ, չալմայով կամ առանց չալմայի, յուրաքանչյուր գլուխ, որը չի ցանկանում ջախջախվել» [Berkes, 1998, 380]:

Ղուրանը թուրքերեն թարգմանելու հարցը այս համատեքստում ամենակարևորներից էր: Ահմեդ Հիքմեթի ու Արիադնա Տիրկովայի երկխոսությունը բնութագրում է իթթիհաթականների դիրքորոշումը հարցի նկատմամբ: Ըստ Հիքմեթի՝ Ղուրանում ամեն ինչ շատ պարզ է գրված, և այն բառացի թարգմանելու դեպքում մարդիկ կասկածի տակ կդնեն այդ գրքի սուրբ լինելը: Այդ ամենով հանդերձ նա պնդում է, որ Ղուրանն անհրաժեշտ է թարգմանել [Тыркова, 1916, 179]: 1914 թ. «Օրիենտ» թերթի խմբագրությունը հայտնում է Ղուրանի մի հատված թուրքերեն թարգմանելու ու տարածելու [The Orient, 18.02.1914, 68], այնուհետև՝ բողոքի ցույցերի ու թարգմանված օրինակները բռնագրավելու մասին [04.03.1914, 85]: Ղուրանի թարգմանությանը կողմ են արտահայտվել իթթիհաթական մի շարք գաղափարախոսներ: Պանիսլամիզմի քարոզիչներից Ահմեդ Աղաօղլուն կարևորել է դա ինչպես կրթության մակարդակը բարձրացնելու, այնպես էլ կրոնի ազդեցությունը տարածելու տեսանկյունից [86]: Գյոքալփը ևս առաջարկում էր արաբերենից թուրքերեն թարգմանել կրոնական գրքերը՝ իսլամը թուրք հավատացյալին ավելի հասկանալի դարձնելու նպատակով [Սաֆարյան, 2012, 163]: Իսկ Թեքինալփը կարևորել է Ղուրանի թարգմանությունը իսլամն ազգայնացնելու, դրան «թուրքական ազգային ոգու կնիք հաղորդելու» առումով [Tekin Alp, 1917, 27]: Հարցին, իհարկե, մոտենում էին մեծ զգուշությամբ՝ հոգևորականության ու մոլեռանդ մուսուլմանների ընդդիմությունը չհարուցելու նպատակով: Սակայն Ղուրանի թուրքերեն թարգմանելու քննարկումներն արդեն իսկ ապացուցում էին իթթիհաթականների քաղաքականության ազգայնական բնույթը, որը հեռահար արդյունքներ գրանցեց:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից ու Մուդրոսի զինադադարից հետո մասնավոր դպրոցների գործունեությունն Օսմանյան կայսրությունում վերսկսվեց, սակայն երկար չտևեց: Նոր՝ քեմալական կառավարությունը, հավատարիմ մնալով իթթիհաթական քաղաքականության ազգայնական ուղենիշներին, վերացրեց բոլոր առանձնաշնորհումները [Желтяков, Петросян, 1965, 118, 147]: 1923 թ. կրթության նախարարության որոշմամբ դեռևս գործող մասնավոր դպրոցներում թուրքերենի, թուրքական պատմության ու աշխարհագրության դասերը պարտադիր դարձան: Ավելին, այդ առարկաները պետք է դասավանդվեին ոչ թե թուրքագետների, այլ հենց ազգությամբ թուրքերի կողմից: Կ. Պոլսի կրթության տեսուչ Սաֆեթ բեյը «Վաթան» (թուրք.՝ Vatan – հայրենիք) թերթին տված հարցազրույցի ընթացքում պարզաբանում է, որ թուրք ուսուցիչներ չընդունող դպրոցները կփակվեն. «Անոնք, որ մեր երկրին մեջ ապրիլ կ'ուզեն, պարտաւոր են ենթարկուիլ տեղական օրենքներուն եւ կանոններուն, ով որ մեր օրենքներուն չի հաւնիր եւ կամ չուզեր անոր ազդեցութեան ենթարկուիլ, կրնայ երկրէն դուրս ելլել: Մանաւանդ որ մեր ընել ուզածը ամեն երկրի մեջ գործադրուած մեթոտներէն դուրս բան մը չէ» [Ճակատամարտ, 30.08.1923, 2]:

Իթթիհաթականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան կայսրությունը թրքացնելու համատեքստում

Թուրքիայի Հանրապետության 1924 թ. սահմանադրությամբ տարրական կրթությունը հռչակվեց պարտադիր ու անվճար: Նույն թվականին «Կրթության միավորման օրենքը» կրթությունը կրոնականից վերափոխեց աշխարհիկի ու ազգայնականի: Բոլոր կրթական հաստատությունները դրվեցին Կրթության նախարարության վերահսկողության տակ: Օսմաներենը վերջնականապես փոխարինվեց թուրքերենով, որը դարձավ պետության պաշտոնական լեզուն: Այս բարենորոգումների մեջ հսկայական նշանակություն ունեցավ հատկապես 1928 թ. նոյեմբերին լատինական այբուբենն ընդունելու մասին օրենքը:

Այսպիսով՝ տեսականորեն սկիզբ առնելով Նոր օսմանների «թուրքերեն խոսողը թուրք է» դրույթից և հասնելով մինչև 1928 թ. «Քաղաքացի՛, թուրքերեն խոսի՛ր» կարգախոսով պետական արշավ՝ բազմէթնիկ ու բազմակրոն Օսմանյան կայսրությունը վերափոխվեց թուրքական ազգային պետության: Իթթիհաթականներն առանցքային դեր ունեցան այս գործում: Դեռևս մինչև համաշխարհային պատերազմի բռնկումը իթթիհաթական վարչակարգը, պետությունը թրքացնելու հեռահար նպատակ հետապնդելով, ազգային փոքրամասնություններին աստիճանաբար իրավագրկելով, մղեց երկրի սոցիալ-տնտեսական կյանքի լուսանցք: Պատերազմի տարիներին այս քաղաքականությունը վերաճեց ցեղասպանական ծրագրի. ֆիզիկական բնաջնջմանը զուգահեռ վերացվեցին հայկական մշակութային, հոգևոր ու կրթական հաստատությունները: Սակայն 1908-1914 թթ. կառավարության միջոցառումների ամբողջությունը բացահայտում է ինչպես միակուսակցական վարչակարգի բնույթն ու դրա հեռահար նպատակները, այնպես էլ հնարավորություն տալիս՝ ընկալելու դրանց ազդեցությունը ազգային փոքրամասնությունների հետագա ճակատագրի վրա:

References

- Adalian R. P.** 1997, “The Armenian Genocide.” In *Century of Genocide: Eyewitness Accounts and Critical Views*, eds. Samuel Totten, William Parsons, Israel Charny, New York, London, Routledge, 1997, pp. 53–93.
- Bayır D.** 2013, *Minorities and Nationalism in Turkish Law*, Surrey, Burlington, Ashgate, 302 p.
- Berkes N.** 1998, *The Development of Secularism in Turkey*, London, Hurst & Company, 537 p.
- Conversi D.** 2007, “Homogenisation, Nationalism and War: Should We Still Read Ernest Gellner?” *Nations and Nationalism*, Vol. 13, No. 3, pp. 371–394.
- Emin A.** 1914, *The Development of Modern Turkey as Measured by its Press*, New York, Longmans, Green & Co., 142 p.
- Gök F.** 2007, “The History and Development of Turkish Education,” in *Education in “Multicultural” Societies: Turkish and Swedish Perspectives*, eds. Marie Carlson, Annika Rabo, and Fatma Gök, Vol. 18, Stockholm, Swedish Research Institute in Istanbul, pp. 249–257.
- Gökalp Z.** 1959, *Turkish Nationalism and Western Civilization*, New York, Columbia University Press, 336 p.

- Hagopian A. D.** 1912, "The Situation in Constantinople," Armenia (New York), March 1912, Vol. V, No. 8, pp. 234–239.
- Hanioğlu Ş. M.** 1995, The Young Turks in Opposition, New York, Oxford, Oxford University Press, 390 p.
- Karagöz S.** 2020, "An Investigation into the Changes and Developments in Teaching Methods Applied in Ottoman Educational Institutions: Sati Bey's Suggestions and Practices," International Journal of Contemporary Educational Research, Vol. 7, No. 2, pp. 160–171.
- Kedourie E.** 1961, Nationalism, London, Hutchinson University Library, 151 p.
- Kieser H.-L.** 2018, Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Princeton & Oxford, Princeton University Press, 533 p.
- Maksudyan N.** 2016, "Agents or Pawns? Nationalism and Ottoman Children during the Great War," Journal of the Ottoman and Turkish Studies Association, Vol. 3, No. 1, pp. 139–164.
- Nezir-Akmeşe H.** 2005, The Birth of Modern Turkey: The Ottoman Military and the March to World War I, London, I.B. Tauris, 256 p.
- Tekin Alp.** 1917, The Turkish and Pan-Turkish Ideal, Constantinople, Admiralty War Staff Intelligence Division, 58 p.
- Tongul N.** 2010, "Türk Harf İnkılâbı," Türk İnkılâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi, Vol. 12, No. 45, pp. 103–130.
- Tozoglu A. E.** 2022, "Educating Masses: The Committee of Union and Progress Clubs and Schools in the Late Ottoman Empire," Journal of Balkan and Near Eastern Studies, Vol. 24, No. 4, pp. 614–639.
- Üngör U. Ü.** 2011, The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913–1950, New York, Oxford University Press, 304 p.
- Yalman A. E.** 1930, Turkey in the World War, New Haven, Yale University Press, xviii+310 pp.
- Yeremeyev D. Ye.** 1971, Etnogenez turok (proiskhozhdeniye i osnovnyye etapy etnicheskey istorii), Moskva, «Nauka», 272 str.
- Zheltyakov A. D.** 1972, Pechat' v obshchestvenno-politicheskoy i kul'turnoy zhizni Turtsii (1729–1908 gg.), Moskva, «Nauka», 318 str.
- Zheltyakov A. D., Petrosyan YU. A.** 1965, Istoriya prosveshcheniya v Turtsii: konets XVIII – nachalo XX veka, Moskva, «Nauka», 174 str.
- Osipova Ye. V.** 1977, Sotsiologiya Emilya Dyurkgeyma (kriticheskiy analiz teoretiko-metodologicheskikh kontseptsii), Moskva, «Nauka», 266 str.
- Safrastyan R. A.** 1985, Doktrina osmanizma v politicheskoy zhizni Osmanskoy imperii (50–70 gg. XIX v.), Yerevan, izdatel'stvo AN ArmSSR, 147 str.
- Tyrkova A. V.** 1916, Staraya Turtsiya i mladoturki. God v Konstantinopole, Petrograd, tip. B. M. Vol'fa, 180 str.
- Fadeyeva I. L.** 1985, Ofitsial'nyye doktriny v ideologii i politike Osmanskoy imperii (osmanizm — panislamizm), XIX – nachalo XX v., Moskva, «Nauka», 272 str.
- Gzoyan E., Galustyan, RR., Khach'atryan SH., Mirzoyan E.,** Hay yerekhaneri t'urk'ats'umy Hayots' ts'eghaspanut'yan tarinerin, Yerevan, HTS'T'I, 2022, 248 ej:
- Zarevand,** Miats'eal, ankakh T'urania kam i'nch' ky tsragren t'urk'ery, t., a. h., 1926, 228 ej:
- T'vop'ch'ean Ye.,** Yeritasard T'iwrk'ian yev hayery, masn arrajin, T'iflis, Shroma, 1909, 288 ej:

Իթթիհադականների դիրքորոշումը լեզվի ու կրթական համակարգի նկատմամբ Օսմանյան կայսրությունը թրքացնելու համատեքստում

Safaryan A., Ziya Gyok' alp'y yev «T'yurk'akanut'yan himunk'nery», Yerevan, YePH hrat., 2012, 300 ej:

T'urk' usuts'ich' ch'yndunogh varzharannery piti p'akuin, «Chakatamart», K. Polis, 30 ogostos, 1923, ej 2:

Editorial, “The Orient”, 4 March, 1914, p. 85.

Empire News, “The Orient”, 18 February, 1914, p. 68.

Jeune-Turc about Missionary Schools, “The Orient”, 24 September, 1913, p. 2.

Startling Figures, “The Orient”, Constantinople, 17 July, 1912, p. 2.

The Lack of Moslem Schools, “The Orient”, 22 April, 1914, p. 153.

Translating the Koran in Turkish, “The Orient”, 4 March, 1914, p. 86.

Turkish Made Easy, “The Orient”, 18 August, 1915, p. 214.

Why They Fell, “The Orient”, 9 April, 1913, p. 2.